ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

Թեմա՝ Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Կազմեց՝ Կարինե Խաչատրյան

<<Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023թ.

Ներածություն

Հետազոտության արդիականությունը իր առջև դրել է բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց անհապաղ լուծմանն են սպասում: Կարծում ենք, դրանցից ամենագլխավորը չափորոշչահեն կրթության ապահովումն է: Այս պարագայում գիտելիքների յուրացումն ինքնանպատակ գործընթաց չէ. առավել կարևորվում են կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Տեղեկատվական հասարակությունում առաջնահերթ է յուրաքանչյուր անհատի ինքնակրթության, ինքնավերահսկման կարողություններին տիրապետող, տարբեր իրադրություններում ճիշտ կողմնորոշվող անձի ձևավորումը: Այդ իսկ պատճառով որ–է գործունեություն ծավալելիս խիստ կարևոր է ինքնուրույնության դրսևորումը: Տարրական դպրոցում վերոհիշյալ կարողությունները, կարելի է ասել, ոչ թե զարգացվում, այլ ձևավորվում են, այդ գործընթացը պայմանավորում է սովորողի հետագա կրթությունը: Այստեղ առկա է հիմնախնդիր՝ կապված ուսումնական առաջադրանքների կատարման հետ. այն է՝ ինչո՞ւ են երեխաները թերանում կամ դժվարանում դասագրքում տրված առաջադրանքներն ինքնուրույն կարդալու-հասկանալու և կատարելու հարցում: Բնական է, որ այս հարցը միանշանակ պատասխան չի կարող ունենալ: Սակայն առաջարկում ենք քննարկել մի շարք հնարավոր դեպքեր, որոնց վերլուծությունն օգտակար կարող է լինել սովորողների ինքնուրույնության կայացման խնդրով շահագրգիռ դասվարներին: Ցանկացած առաջադրանքի կատարում սկսվում է առաջադրանքի պահանջի ընթերցումից: Այն կարդալու և հասկանալու առաջին նախապայմանը տառաճա-նաչությունն է, իսկ պահանջի ընթերցումը հետապնդում է երկու նպատակ.

- հասկանալ՝ ինչ է պահանջվում առաջադրանքը կատարողից,
- հասկանալուց հետո կատարել առաջադրանքը:

«Տարրական դասարաններում ուսուցումն իրականացվում է նաև ընթերցանության միջոցով: Եթե երեխան լավ է տիրապետում ընթերցանության տեխնիկային, բանավոր և գրավոր խոսքին, սիրում է գիրքը, ապա նա կարող է ուսումնական տարբեր փուլերում հաջողությամբ յուրացնել ծրագրային նյութը»:

Հետազոտության նպատակը հասկանալով կարդալու համար աշակերտը պետք է տիրապետի կարդացա- ծը վերլուծելու կարողությանը: Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը և փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Այդ կա- ողության ձևավորման համար հիմնական դաշտ են ծառայում մաթեմատիկան և քերականությունը: «Ամեն ինչ բառացի հասկանալու մանկական մտածողության հատկությունը, իրադրությունից վեր լինելու և դրա վերացական կամ փոխաբերական իմաստը հասկանալու անկարողությունը, երեխայի մտածողության հիմնական առանձնա- հատկություններից մեկն է, որը վառ արտահայտվում է այնպիսի վերացական դպրոցական առարկաների ուսումնասիրման ժամանակ, ինչպիսիք են՝ մաթեմատիկան և քերականությունը»: Հաշվի առնելով այս հանգամանքը, այդուհանդերձ, հնարավոր է կարդալու որակի բարձրացման հաշվին զարգացնել վերլուծական ունակությունը: Իսկ կարդալու հմտությունը զարգանում է ամեն պահի, երբ երեխան փորձում է ինչ-որ բան կարդալ մտքում – հասկանալ: Նա փորձում է կարդացածն ինչ-որ մեկին բացատրել, կամ պարզապես վերարտադրել դրա բովանդակությունը, կարդացածի շուրջ հարցեր տալ և այլն: Եվ որքան նա այդ գործողությունները շատ է կատարում, այնքան նրա կարդալու որակական հատկանիշները բարձրանում են: Վերոնշյալ գործողություններին ուղղորդված ընթացք չտալը կամ նպատակային քայլեր չմշակելն ի վերջո հանգեցնում են նրան, որ սովորողներից ոմանք տիրապետում են կարդալու-հասկանալու հմտությանը, իսկ շատերը՝

լրջորեն թերանում են այդ հարցում: Ակնհայտ , որ թերացումներն ավելի հստակ են երևում, երբ երեխաները մաթեմատիկայից կամ մայրենի լեզվից ինչ-որ առաջադրանքներ կատարում են ինքնուրույն: Ուսումնասիրենք մի քանի օրինակներ, որտեղ արտահայտվում են երեխաների՝ առաջադրանքի պահանջներն ուշադիր կամ ընդհանրապես չկարդալու փաստերը: Պարտադիր է մի պայման. ուսուցիչը պետք է միշտ ուշադրություն դարձնի առաջադրանքի պահանջը սովորողների կողմից ինքնուրույն ընթերցելու որակի բարձրացմանը: Երբ նա պարբերաբար մոռանում է ուշադրություն դարձնել այդ որակի զարգացման վրա, արդյունքում ստանում է այն, ինչ այսօր կա մեր կյանքում: Առաջադրանքի պահանջը վերլուծաբար չկարդալու բացասական որակ են պահպանել անգամ մեծահասակները (անկախ իրենց գիտական աստիճանից և մասնագիտությունից): Բոլորս փորձում ենք արագ կատարել առաջադրանքը, առանց ուշադիր կարդալու պահանջը, այնինչ՝ առաջադրանքի կատարումը պետք է լինի վերջին քայլը: Թվարկենք քայլերն իրենց հաջորդականությամ՝

1. ուշադիր կարդալ պահանջը,
2. հասկանալ, թե ինչ է պահանջվում,
3. ուսումնասիրել առաջադրանքը,
4. կատարել այն:

Պահանջի ընթերցման կարողություն ձևավորելու համար կարելի է դիմել տարբեր մանկավարժական հնարների, սակայն ցանկացած գործի հաջողության գրավականը հետևողականությունն ու շարունակականությունն է այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել տվյալ կարողությունը: Ուսուցիչները սովորություն ունեն երեխաների փոխարեն առաջադրանքի պա- հանջը արձրաձայն կարդալ: Սա առաջին կոպիտ սխալն է, որը նրանց կողմից պարբերաբար թույլ է տրվում: Երեխաների միջավայրում ձևավորվում է այն կարծիքը, թե պահանջները շարադրված են նրա համար, որ դրանք իրենց համար կարդան ուսուցիչները, իսկ իրենք միայն կատարեն առաջադրանքը: Կարելի է ասել, որ առանց ուսուցչի աջակցության երեխաները հազվադեպ են ինքնուրույն հասկանում պահանջը: Այս խնդիրը հիմա շատ արդիական է, քանի որ ըստ նոր գնահատման համակարգի՝ երեխան պարբերա պետք է գրի թեմատիկ գրավոր աշխատանքներ, որոնցում դրսևորվելու են ոչ միայն յուրացված գիտելիքները, այլև աշխատանքը լրիվ ինքնուրույն կատարելու կարողությունները: Այսինքն՝ ինքնուրույն կարդալու և հասկանալու կարողությունը ոչ միայն արժեք է, այլև անհրաժեշտություն՝ բարձր ուսումնական առաջադիմություն ցուցաբերելու առումով: Ի վերջո, այս տեղեկատվական դարում ցանկալի է, որ երեխան կարդալու-հասկանալու միջոցով կարողանա կարևորը անկարևորից տարբերել, վերլուծել ընթերցածը և ճիշտ եզրահանգումներ կատարել:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Կրտսեր դպրոցականների ինքնուրույն ընթերցանության նպատակը գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը:

Եթե աշխատանքը ճիշտ է պլանավորված և կազմակերպված, ապա կրտսեր դպրոցականները ինքնուրույն ընթերցանությամբ պարբերաբար զբաղվում են թե՛ դասարանում՝ դասի ժամանակ, թե՛ դասից դուրս՝ տանը:

Մեթոդապես ճիշտ և համակարգված ընթերցանության կազմակերպումը նպաստում է կրթադաստիրակչական մի շարք խնդիրների լուծմանը: Հասկանալով կարդալ, տիրապետել ընթերցանության արտահայտչամիջոցներին, գրքով աշխատել, այն դիտելով, որպես գիտելիքների, բարոյական և գեղագիտական ինքնադաստիարակման, սովորելու կարողությունների մշակման հիմնական աղբյուր:

Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպումը: Այնտեղ, որտեղ կրտսեր դպրոցականների նպատակային և պլանավորված ինքնուրույն ընթերցանությունն իրականացվում է հանձնարարականներով և վերահսկմամբ, աշխատանքը դառնում է տարերային, հաջողությունները՝ մասնակի:

Ինքնուրույն ընթերցելու կարողությունը մեծ քայլ է երեխայի համար դեպի արդյունավետ և նպատակային ուսուցում, կարելի է ասել, որ ընթերցելու կարողության շնորհիվ է երեխան ուսումնասիրում դասագրքերը: Ընթերցանությունն ուսուցման միջոցներից մեկն է, և այս դեպքում էլ, ինչպես փորձն է ցույց տալիս, ճիշտ է սովորողին ազատություն և ընտրության հնարավորություն տալը՝ գրքի ընտրությունը թողնելով նրան: Սակայն ինչպես ծանոթացնել և հասու դարձնել սովորողին ընթերցասրահի գրքի պաշարին և ինչպես նրա մեջ այդ գրքերը կարդալու հետաքրքրություն և ցանկություն առաջացնել: Մեր աշխատանքի ընթացքում այդ նպատակով իրականացրել ենք մի շարք հնարներ, կազմակերպել ենք միջոցառումներ: Հաճախ մեր պրակտիկայի ընթացքում անավարտ ենք թողնում հեքիաթի կամ պատմվածքի ավարտը փորձելով հետաքրքրություն առաջացնել երեխայի մեր և թույլ տալիս, որ երեխան հետամուտ լինի ավարտը հորինելու: Եթե երեխան ինքն է ընտրում գիրքը կամ ստեղծագործությունը, ապա հաճույքով հետամուտ է լինում այն ընթերցելուն:

Գրքի նկատմամբ հետաքրքրությունը և սերը պահպանվում և զարգանում են, եթե առկա են որոշակի պայմաններ՝

1. Այն գիրքը, որի նկատմամբ ես կամենում եմ երեխաների մեջ սեր և հետաքրքրություն արթնացնել, նրանց ձեռքին պիտի լինի մշտապես: Ասել է թե՝ երեխան պետք է

շրջապատված լինի գրքերով: Եվ որքան ձևավորմամբ գրավիչ ու բազմազան լինեն դրանք, այնքան մեծ կլինի երեխաների հետաքրքրությունը:

2. Յուրաքանչյուր դասի ընթացքում գրքի հետ տարվող աշխատանքի բովանդակությունը խստորեն պիտի համապատասխանի երեխաների կարդալու կարողություններին, գիտելիքների փաստացի մակարդակին և ճանաչողական հետաքրքրություններին:
3. Աշխատանքը գրքով պետք է կազմակերպել այնպես, որ բավարարի ամեն մի երեխայի հետաքրքրությունը:

Ինքնուրույն մանկական ընթերցանության հիմնական ձևերը

Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության գլխավոր կազմակերպիչը ոչ թե գրադարանավարն է, այլ դասվարը: Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման ձևերը բազմաբնույթ են.

- Ինքնուրույն ընթերցանության դասեր,
- Սովորողների զանգվածային ինքնուրույն գործունեություն՝ կապված ընթերցանության հետ (գրական ցերեկույթների, վիկտորինաների նախապատրաստում, գրքերի ցուցահանդեսներ, դասարանային գրադարանի ստեղծում և այլն),
- Սովորողների ընթերցանության ուղղությամբ քարոզչություն ընտանիքներում,
- Օգնություն՝ երեխաների անձնական գրադարանների ստեղծման գործում:

Ինքնուրույն ընթերցանության դասերն առանձնացվում են ընթերցանության համար նախատեսված ժամերից և արտացոլվում են դասամատյանում:
Մշտապես իրականցվող ինքնուրույն ընթերցանությունը, ապահովելով կրտսեր դպրոցականների վրա մանկավարժական ազդեցության պարբերականությունը, սովորողներին նախապատրաստում է մանկական գրքերի ինքնուրույն ընտրությանը: Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծվում են ընթերցողական փորձի և ճաշակի զարգացման, կարդացածի օգտակարության և արդյունավետության գիտակցման պայմաններ:
Ինքնուրույն ընթերցանության՝ պարապունքից պարապունք ընկած ժամանակահատվածում ես երեխաների ուշադրությունը հրավիրում եմ << ընթերցանության անկյան >> վրա: Այն ձևավորվում է անմիջապես առաջին պարապունքից հետո և գործում է ուսուցման երեք տարիների ընթացքում:
Ինքնուրույն ընթերցանության հետ կապված զանգվածային միջոցառումներն (ցերեկույթներ, հանդեսներ, վիկտորինաներ, գրքերի ցուցահանդեսներ և այլն) կազմակերպվում են ոչ ավելին, քան 1-2 անգամ: Այստեղ կարևորն այն է, որ անհրաժեշտ նյութի ընտրությունը համապատասխանի սովորողների՝ որոշակի ժամանակահատվածում ինքնուրույն ընթերցած գրքի բովանդակությունը:
Այդ միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է երեխաների առաջ դնել որոշակի խնդիրներ և հնարավորություն ստեղծել, որ նրանցից յուրաքանչյուրը դրսևորի խնդրի լուծման նախաձեռնություն, ստեղծագործական մոտեցում, փորձի իր ուժերը և հանդես գա հասարակության արջև: Օրինակ, եթե ինքնուրույն ընթերցանութան գծով մեկ քառորդի ընթացքում նախատեսված է որպես հանդիսության նյութ ընտրել կարդացած հեքիաթներից: Այս մասին սովորողներին պետք է զգուշացնել քառորդի սկզբում: Ընթերցված յուրաքանչյուր հեքիաթ հատուկ առաջադրանքով պետք է ուսումնասիրվի ցերեկույթի համար: Իմ օգնությամբ (կարելի է ընդգրկել նաև բարձր դասարանցիներին, ծնողներին) կազմակերպվում է մտահղացումների իրականացման աշխատանքները: Այդ նպատակով ստեղծվում են աշխատանքային փոքր խմբեր որոնք ստանում են տարաբնույթ առաջադրանքներ և լուծում որոշակի խնդիրներ: Ես միայն հետևում են նախապատրաստական աշխատանքների ընթացքին: Անմիջականորեն մասնակցում եմ միայն աշխատանքի ավարտական փուլում:
Աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում սովորաբար ցերեկույթին մասնակցում է ամբողջ դասարանը: Սա ցերեկույթի հաջողության կարևորագույն գրավականն է: Ինքնուրույն ընթերցանության հետ կապված զանգվածային միջոցառումների նախապատրաստորմը ու անցկացումը չի կարելի դիտել որպես զվարճալի միջոցառում: Ընդհակառակը՝ այդ աշխատանքն

արթնացնում է հետաքրքրություն գրքի նկատմամբ զարգացնում է երեխաների երևակայությունը, հիշողությունը, խոսքը, ճաշակը, դաստիարակում բարոյականային արժեքավոր վորակներ:
Այս դիրքորոշմամբ էլ պետք է մոտենալ դասարանային գրադարանին, գրքերի ցուցահանդեսի, անձնական գրադարանի ձևավորմամն աշխատանքներին: Այսպիսի գործողության ընթացքում սովորողների մեջ ձևավորվում է ընթերցողական գործնական փորձ: Ծնողների օգնությամբ դասարանում ստողծվում է գրքերի անկյուն: Դրվում է մի սեղան, գրապահարան, գրատախտակ և այլն: Ցուցադրվում է մանկական գրքեր: Սեղանին առաջին պլանում, երեխաներին մատչելի տեղում դրվում է այն գիրքը, որն այդ շաբաթ ընթերցել եմ ես: Դասամիջոցին երեխաներն մոտենում են, թերթում գիրքը, դիտում նկարները: Ես հետևում եմ երեխաների գրքերի հետ խնամքով վարվելու համապատասխան խորհուրդներ տալիս: Դեռևս առաջին դասարանի առաջին կիսամյակից պետք է պարտադիր համարել դասարանային գրադարանի ստեղծումը և ստեղծագործաբար ընդօրինակել ու օգտվել թե՛ դպրոցական, թե՛ մանկական մոտակա գրադարանից: Ես պետք է մշտական կապի մեջ լինեմ այդ գրադարանների աշխատակիցների հետ:
Պակաս կարևոր չէ իմ ուշադրությունը աշակերտների անձնական գրադարանի նկատմամբ: Հենց այստեղից է սկսվում փոքրիկ ընթերցողի ընթերցողական ճաշակի, հետաքրքրությունների ձևավորումը, գրքի նկատմամբ վերաբերմունքն ու ընդհանուր կուլտուրան: Փաստորեն անձնական գրադարանի ստեղծումը պարբերաբար իրականացվող ընթերցանության, գիտելիքների ձեռքբերման նկատմամբ պահանջմունքի ընթերցողական կարողությունների և հմտությունների ձևավորման գրավականն է: Անձնական գրադարանի հարստացումը անհրաժեշտ գրքերով հետաքրքրաշարժ գրավիչ և օգտակար զբաղմունք է, որով երեխան որոշ չափով լցնում է իր ազատ ժամանակը: Ծնողական ժողովների ժամանակ պարբերաբար քննարկվում են մանկական ընթերցանության խնդիրները և կատարվում է այդ ուղղությամբ ծնողների փորձի փոխանակում:
Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատեր տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:
Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի աշխատասիրության ազնվության ճշտապահության բարոյական ու կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործնթացում, այսինքն ՝ ուսուցմանն զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով:
Արտադասարանայն եզրույթն առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստակն գրականությունը տանող ճանապարհը:
Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց գոյություն ունի միայն դասագիրքը: Ինչ խոսք իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար այն մի ուրույն աշխարհ է: Սակայն գախտնիք չէ, որ երեխայի համար կարդալը մեծ մասամբ հաճելի զբաղմունք չէ: Այն աշխատատար գորրծնթաց է: Ընդ որում, անհրաժեշտ է առանձնացնել ընթերցանության երոկու տեսակ ընթերցանություն՝ որպես տառերի վերակոդավորում, և ընթերցանություն՝ որպես տեղեկատվության ընկալման հնարավորություն: Այս երկու ուղղություններից անհնար է և անիմաստ է մեկի իրականացումն առանց մյուսի: Իսկ դա դեռևս նոր կարդալ սովորող կրտսեր դպրոցականի համար այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ: Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում է ոչ թե տառերի կամ վանկերի, այլ բառերի տեսքով: Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում, ինչն էլ նպաստում է անցնել

վարժ, սահուն ընթերցանությանը: Եվ բազմաթիվ վարժությունների վրա հիմնված աշխատանքը տալիս է իր պտուղները. Երեխան յուրացնում է և սկսում հասկանալ կարդացածը: Արդեն ժամանակն է անցնել արտադասարանային ընթերցանության: Դրա համար առաջին հերթին հարկավոր է երեխայի հոգում արթնացնել սեր գրքի և ընթերցանության նկատմամբ, ձգտել, որպեսզի գիրք ընթերցելը նրա համար դառնա իսկական հոգեկան պահանջ:

Որքան վաղ է երեխան սկսում կարդալ այնքան ավելի շատ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը և նպաստում ընթերցողական կարողությունների կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրանց թերի կմնա անհատի ինքնակրթությունը: Մայրենիի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր ենք արթնացնում մեր ժոցովրդի և հայրենիքի հանդեպ, նրանց հաղորդակից դարձնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկոիթյանն ու ճկունությանը: Ահա հենց այս տեսանկյունից մոտենալով հարցին՝ նկատում ենք, որ միայն մայրենիի դասերի ընթացքում հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Եվ դրա պատճառը միայն ժամանակի սահմանափակությունը չէ: Կարևոր է երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել գրքի և գեղարվեստական գրականության նկատմամբ՝ սկսած առաջին դասարանից: Մեր օրերում դա այնքան էլ հեշտ գործ չէ:Երեխաները չեն կարդում լրացուցիչ գրականություն, սահմանափակվում են միայն ծրագրային նյութերով :Մինչդեռ արտադասարանային ընթերցանությունը մայրենիի ուսուցման կարևորագույն բաղադիչներից մեկն է և սովորողներին թույլ է տալիս զգալիորեն ընդարձակել ու խորացնել դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքները: Այն աշակերտների մտահորիզոնի ընդլայնման, բառապաշարի հարստացման, գրական ճաշակի ձևավորման կարևորագույն միջոց է:

Արտադասարանային ընթերցանությունը կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները: Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքները: Հենց դրա միջոցով է իրականանում մի սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին: Ցավոք, մեր աշակերտության մեջ մեծ թիվ են կազմում գեղարվեստական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չունեցող երեխաները:Դեռևս ոչ վաղ անցյալում գրիք ընթերցելն անհրաժեշտություն էր: Այսօր պատկերը բոլորովին այլ է: Սովորողների մի մասի ընթերցասիրության նվազումը պետք է բացատրել նաև տեղեկատվակա աղբյուրների առատությամբ: Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ: Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստացույցը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Ինչպես սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է ,որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա:Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող:Չէ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը դեռևս չի նշանակում դառնալ ընթերցող: Գլխավորը՝ ընթերցանության կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը : Իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության :

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիչն ինչպես երեխային

օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բավական է պարտադրանքն այդ ուղղությամբ։ Դպրոցում ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունների զարգացումն հնարավոր է արտադասարանական ընթերցանության միջոցով։ Դա լայն հնարավորություններ է ընձեռում սովորողի ճանաչողական գործընթացների զարգացման , գրքի նկատմամբ հետաքրքրության դաստրարակության գործում։Տվյալ թեմայի վերաբերյալ մայրենիի դասին հանձնարարված գրականություն ուսումնասիրելով՝ երեխան ինքնքբերաբար մտնում է ընթերցողական դաշտ և կապվում գրքին։Միայն կարդալ սովորեցնելը քիչ է։Ինչպես ՈՒՇինսկին էր ասում , կարդալը դեռ ոչինչ չի նշանակում ։Ինչ և ինչպես կարդալ սա է հարցի էությունը։
Եթե նախկինում լրացուցիչ ընթերցանության նյութերը զետեղված էին մայրենիի ընթերցարաններում , ապա այժմ դասագրքերը չծանրաբեռնելու նպատակով դրանք հանված են ։ Հետևաբար հրատապ խնդրի էր դարձել ինքնուրույն ընթերցանության նոր ձեռնարկի ստեղծումը՝ ըստ առանձին դասարանների։ Այդ կերպ հնարավոր է ընթերցանության ծրագրային նյութերին համապատասխան լրացուցիչ տեղեկություններ հաղորդել անցնելիք թեմատիկ խմբերի նյութերի վերաբերյալ։
Մինչ այժմ << Արտադասարանային ընթերցանություն>> առարկան դուրս է եկել հիմնական ուսումնական պլանից. . . Այժմ մայրենիի քառամյա նոր ծրագրով առանձին դասաժամ է հատկացված արտադասարանային ինքնուրույն ընթերցանությանը։ Շատ ուսուցիչներ այդ հնարարվորությունն օգտագործում են հիմնական թեմաներն ուսուցանելու կամ ծրագրային բացթողումներն այդ ժամերի հաշվին լրացնելու նպատակով ։ Մինչդեռ ինքնուրույն ընթերցանության խնդրիներն այլ են .
-ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և զարգացում,
-ընթերցասիրության սերմանում,
-գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու և վերլուծելու կարողության զարգացում,
-կրտսեր դպրոցականի բարոյակամային արժեքների և գրական ճաշակի ձևավորում,
-ձեռք բերած գիտելիքների ընդլայնում և խորացում,
-սովորողների հետաքրքրությունների ձևավորում
-աշակերտների ճանաչողական գիտելիքների ձեռքբերում և այլն ։
Գործող ծրագրերում որոշակի պահանջներ են առաջադրված աշակերտների արտադասարանային ընթերցանության կազմակերպման ,ղեկավարման և ստուգման ուղղությամբ ։Ըստ ծրագրի ցուցումի՝ 2-4-րդ դասարաններում արտադասարանական ընթերցանությանը հատկացված է շաբաթը մեկական պարապմունք։
Այդ պարապմունքներն անցկացվում են դասարանում՝ ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված դասաամին ։Սակայն մեծ ուշադրություն պետք է դարձնել նաև երեխաների արտադպրոցական ընթերցանությանը։
ՈՒսուցչին մեծ օգնություն կլինի հատուկ ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ձեռնարկների ստեղծումը տարրական բոլոր դասարանների համար։ Դրանց մեջ զետեղված կլինեն պարզ և որոշակի սյուժեով փոքրածավալ նյութեր։ Անպայմանորեն հաշվի կառնվի պարզագույնից աստիճանաբար ծավալուն ստեղծագործությունների անցման սկզբունքը։ Դրանց միջոցով աշակերտները կկարողանան բացահայտել տվյալ ստեղծագործության գաղափարական բովանդակությունը , գեղարվեստական արժեքները և այլն։ Հրապարակի վրա է այդօրինակ ձեռնարկներից առաջինը՝ <<Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 2-րդ դասարան>>։ Գիրքը նպատակ է հետապնդում կատարելագործելու կարդալու և պատմելու տեխնիկան, դրա հետ մեկտեղ ձևավորել աշակերտների գեղագիտական ճաշակը, նրանց աշխարհըմբռնումը, ներկայացնել շրջապատի, կենդանական ու բուսական աշխարհի ճանաչման գործընթացը գեղարվեստական և գործնական բնույթի զանազան նյութերի միջոցով։Գրական տեքստերի ընտրությունը կատարվել է՝ հետևյալ սկզբունքների նկատմամբ .

-երեխայի ընթերցողական հետաքրքրությունների հաշվառում,
-բնագրերի հասանելիություն ,որքանով է ստեղծագործությունը համապատասխանում տվյալ տարիքի աշակերտի կարողություններին,
-գրական տեքստերում թեմաների և ժանրերի բազմազանություն,
-հեղինակների լայն ընդգրկում
Արտադասարանային ընթերցանության արձակ և չափածո ստեղծագործությունները ոչ թե կրկնում են մայրենիի դասերին արդեն անցած նյութերը, այլ համալրում և հարստացնում նրա գիտելիքները:
Կարդալով գրքում զետեղված հետաքրքրաշարժ պատմություններն ու հեքիաթները , առակներն ու բանաստեղծությունները՝ երեխան կհանդիպի տարբեր հերոսների՝ մարդկանց և կենդանիների , իմանալ նրանց լավ և վատ արարքների մասին, ձեռք կբերի բազում գիտելիքներ:
Ընթերցանությունը պետք է կատարվի տանը, որպեսզի երեխան կարողանա կատարել <<Ինքնուրույն աշխատանքի>> համար նախատեսված առաջադրանքները: Այդ աշխատանքի հսկողությունը և կողմնորոշումն իրականացվելու են՝ ուսուցչի ղեկավարությամբ և ընկերների օգնությամբ՝ <<խմբային աշխատանքի>> հարցերի քննարկման եղանակով:
Ամեն մի բնագրից հետո տրված են առաջադրանքներ՝ դեպքերը նկարագրող, հերոսների արարքներն ու հոգեբանական վիճակները գնահատող: Նախատեսված են նաև ստեղծագործական բնույթի հանձնարարականներ: Դրանց կատարումը ենթադրում է յուրաքանչյուր տարբերակի համար գործնական պատասխաններ: Հարցերի հերթականությունն այնպիսին է, որ երեխան կարող է քայլ առ քայլ վեր հանել ստեղծագործության ենթատեքստը, հասկանալ այն ներթաքույց գաղափարը որը չի երևում, բայց հեղինակը հենց դա է ցանկանում ի ցույց դնել:
Աշակերտները կարող են այդ աշխատանքները կատարել բանավոր, գրավոր, անհատապես, ենթախմբերով և ամբողջ դասարանով վերջում կատարելով համապատասխան ընդհանրացումներ: Նրանք պետք է գիտելիքներ ստանան ինքնուրույնաբար, որոնողական-հետազոտական և համագործակցային աշխատանքների միջոցով և ոչ պատրաստի ձևով:
Թեմաների բազմազանությունը և մատչելիության տարբեր աստիճանները հնարավորություն են տալիս անցկացնել տարամակարդակ աշխատանքներ՝ հաշվիառնելով աշակերտի հետաքրքրությունները:
Ինքնուրույն ընթերցանության դասերին աշակերտները կծանոթանան հայ և արտասահմանյան մանկական գրականությանը, հայտնի հեքիաթասացների ստեղծագործություններին այդ կերպ նրանք հաղորդակից կդառնան գրական բարձրարժեք խոսքին և պատկերավոր մտածողությանը:
Մեծ դասականների գրական աշխարհ թափանցել հնարավոր է միայն մանկական դասական ստեղծագործություններն ինքնուրույն կարդալու, հարցերի սեփական պատասխանները գտնելու միջոցով. Այդպես նրանք կարող են նրանք բավարարել իրենց հոգևոր գրական տեքստերի բազմակողմանի հետաքրքրությունները, կարող են նկատվել և ընկալել գեղեցիկը՝ դատապարտելով բացասական երևույթները:

Հեքիաթաթերապիա

Երեխաների բարոյական կերպարի ձևավորման տեսակետից անփոխարինելի է գրական կերպարների դրական ներգործությունը: Այդ առումով անգնահատելի է հեքիաթների դերը: Բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ ընթերցել կամ լսել ուստի գրքում ամենամեծ տեղն զբաղեցնում են և՛ հեղինակային, և՛ աշխարհի ժողովուրդների հեքիաթները:
Հեքիաթների շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը, գաղափար կազմում բարու և չարի մասին: Հեքիաթն իր հերոսներով, ժողովրդական բառ ու բանով, լեզվամտածողության հատուկ դրևսորումներով հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը հերոսների բնավորության գծերի պարզությունը, հաճելի ավարտը, մատչելի ենթատեքստը հեշտացնում են ընթերցումը: Հեքիաթներն ունեն հետաքրքրական դիպաշար: Դրանք երեխայի ամբողջ էությունը համակող ընթերցանության նյութեր են: Հաճախակի կրկնվող բառերի ու արտահայտությունների դեպքերն ու հերոսները արագ և անջնջելիորեն տպավորվում են նրա հիշողության մեջ:
Մեծմանկավարժ Վ. Սուխոմլինսկին <<Սիրտիս նվիրում եմ երեխաներին>> գրքում ասել է. <<հեքիաթի դասավանդումն ամենաքնքուշ հպումն է երեխայի սրտին: Եվ այդ հպումից երեխան կթևավորվի , հեքիաթների կախարդական աշխարհում կթրծվեն նրա միտքն ու հոգին, կնրբանան զգացմունքները>>:
Գրքում զետեղված են նաև ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ՝ տվյալ դասարանի աշակերտների մտավոր կարողություններին համապատասխան առածներ, ասացվածքներ, հանելուկներ, խաղիկներ, շուտասելուկներ և սուտասելուկներ:
Դրանք ոչ միայն զարգացնում են երեխաների պատկերավոր մտածողությունը, հարստացնում նրա գիտելիքները, այլ առիթ են ստեղծում դասարանական զվարճալի զրույցների, ուրախ և հետաքրքիր ժամանցների, բանավեճերի , խաղերի ու մրցույթների համար:
Խոսելով առածների ուսուցման մասին՝ ռուս մեծ մանկավարժ ՈՒշինսկին գրել է .<<Առածը հենց այն բանով է լավ , որ նրանում գրեթե միշտ, չնայած այն բանին, որ նա ավելի կարճ է, քան լորի պոչը, կա ինչ-որ բան , որ երեխան պետք է հասկանա , դա փոքրիկ մտավոր խնդիր է՝ բոլորովին համապատասխան երեխայի ուժերին>>:
Առած-ասացվածքներն արտացոլվում են կյանքն իր բոլոր սքանչելի կողմերով:Դրանցում խտացված է ժողովրդական իմաստությունը:Ծավալով փոքրիկ այդ ստեղծագործությունները ներառում են այնպիսի արտահայտություններ, սովորույնթների հիշատակումներ, խոհուն հայացք՝ բնության, մարդկային գործունեության ու կյանքի տարբեր երևույթների նկատմամբ , որոնց շնորհիվ նշանակալիորեն կարևորվում է դրանց ճանաչողական ու բարոյադաստիարակչական արժեքը:
Որպես համառոտ, դիպուկ ու պատկերավոր խոսքի գեղեցիկ նմուշներ՝ առախները մեծապես նպաստում են երեխաների ոչ միայն լեզվի մշակմանը , այլև տրամաբանական ու պատկերավոր մտածողության զարգացմանը: Բացի այդ , դրանք կարող են դառնալ հեքիաթների , առակների բովանդակության և գաղափարի մի յուրօրինակ ամփոփում, որպեսզի երեխան իրքնուրույն կարողանա կարդացածն ընդհանրացնել համապատասխան առածով կամ ասացվածքով:
Օրինակ՝ ընկերասիրության, միասնության մասին տրված հետևյալ առած-ասացվածքները երեխան կարող է օգտա գործել համապատասխան ստեղծագործության բովանդակոիթյան ընդհանրացման նպատակով:
Կրտսեր դպրոցականին կարող են գրավել նաև ժողովրդական և հեղինակային հանելուկները, որոնք նրանց ծանոթացնում են շրջապատի առարկաներին ու երևույթներին, ուշադրություն հրավիրում դրանց բնորոշ , ցայտուն կողմերի վրա:

Հանելուկները մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների մեջ՝ զարգացնելով նրանց դիտողականությունը, տրամաբանությունն ու պատկերավոր մտածողությունը։ Մեծ է նաև արձակ հանելուկների ճանաչողական արժեքը։ Դրանք կօգնեն երեխային ավելի հեշտությամբ գուշակել հանելուկի պատասխանը , նրա նմանողությամբ հյուսել հանելուկներ իր շրջապատի իրերի և երևույթների մասին։ Դասարանական քննարկման համար նախատեսված հարցերի օգնությամբ հետևում ենք դիպաշարի զարգացմանը և ստեղծագործական հարցերի միջոցով բացահայտում բնագրի բովանդակային խորքերը։ Հարցերի հերթականությունն ունի մեծ նշանակություն : Թեև ավանդաբար սկսում ենք նկարագրող հարցերից և վերջացնում ստեղծագործական ու հոգեբանական բնույթի հարցադրումներով։
Ալստեղ և ուսուցչին, և աշակերտներին կարող են ուղղորդել բնագրերի վերջում տրված խմբային ու ենթախմբային հարցերն ու առաջադրանքները։ Սակայն հարցերի մեծ մասը պայմանավորված է իրադրությամբ, այսինքն՝ դրանք բխում են հենց աշակերտների հետ աշխատանքից։ Հատկապես ողջունելի է աշակերտների կողմից միմյանց տրվող հարցերի առաջադրումը ենթախմբային աշխատանքի ժամանակ։ Դա ցույց է տալիս, որ նրանք փորձում են հասկանալ տեքստը։
Եթե ստեղծագործությունը ծավալուն է, ապա այն կարող ենք անցնել երկու մասով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ընթերցանության ուսուցման գործընթացում դաստիարակության համար ուսուցիչը պետք է կարողանա ընտրել նյութի մատուցման այն ձևը, որը սիրելի է դարձնում ընթերցանության ուսուցման գործնթացը: Առաջին հերթին ինքնուրույն ընթերցանության դերը մեր օրերում արդիական հաջողություն ունի, քանի որ մատաղ սերունդը համակարգիչը գերադասում է գրքից: Երեխաներին գրքին կապելու աշխատանքը պետք է սկսել հնարավորինս շուտ՝ սկսած գրաճանաչության շրջանից: Որպես միջոց արդյունավետ է ինքնուրույն ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Այդ աշխատանքը պետք է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին և գիրքը դառնա երեխայի լավագույն ուղեկիցն ու բարեկամը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<<Նախաշավիղ>> - ամսագիր
<<Մանկավարժություն>> - ամսագիր
ՈՒՉ Մայրենի 2-4